ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի
2025թ. ապրիլի 1-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից նիստին ներկա էին 26-ը: Նիստը նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար տ.գ.թ., դոցենտ Հ.Մարգարյանը:

Քվորումը ստուգելուց առաջ, խորհրդի նախագահը նշեց, որ գիտխորհրդի կազմում կատարվել են փոփոխություններ: ԳԽ հրավիրյալ անդամ Վաչե Վազգենի Գաբրիելյանի ցանկությամբ նրա լիազորությունները որպես գիտխորհրդի անդամ դադարեցվել են և նրա փոխարեն ԳԽ հրավիրյալ անդամ է հաստատվել «Արցախբանկ» ՓԲԸ-ի զարգացման գծով տնօրեն - գործադիր տնօրենի տեղակալ, տնտեսագիտության թեկնածու Լևոն Աշոտի Մարտիրոսյանը: Հավելեց, որ ֆակուլտետի ԳԽ սովորող անդամ Վերգինե Դանիելյանը իր դիմումի համաձայն դադարեցրել է լիազորությունները որպես գիտխորհրդի անդամ և ֆակուլտետի Ուսանողական խորհուրդը նրա փոխարեն ֆակուլտետի ԳԽ սովորող անդամ է ընտրել «Շուկայագիտություն (մարքեթինգ)» կրթական ծրագրի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի, ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահ Անահիտ Արամի Սվազյանին: Խորհրդի անդամները շնորհավորեցին գիտխորհրդի նորընտիր անդամներին և մաղթեցին արգասաբեր աշխատանք:

Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. Դոցենտի գիտական կոչում հայցելու երաշխավորում
2. Մագիստրոսական կրթական ծրագրերի փոփոխությունների հաստատում
3. Մագիստրոսական կրթական նոր ծրագրի ստեղծում
4. Մագիստրոսական թեզի ծավալների հաստատում
5. Ընթացիկ հարցեր

1. ԼՍԵՑԻՆ. Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության թեկնածու Գնել Էդուարդի Սահակյանի դիմումը՝ դոցենտի գիտական կոչում հայցելու վերաբերյալ:

1. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովի անդամ, Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Գ.Հայրապետյանը հայտնեց, որ Գ.Է. Սահակյանը դիմել է դոցենտի գիտական կոչում ստանալու համար՝ ներկայացնելով բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը: Ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են դոցենտի գիտական կոչում հայցելու պայմաններին, քննարկվել են մրցութային հանձնաժողովի 14.02.25թ. թիվ 8 նիստում, և հայցը երաշխավորվել է ներկայացնել գիտական խորհրդի քննարկմանը: Նշեց նաև, որ Ֆինանսահաշվային ամբիոնը ևս 31.01.25թ. թիվ 7 նիստում միաձայն որոշել է միջնորդել ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդին քննարկելու Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության թեկնածու Գ.Է. Սահակյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը:

2. Ելույթ ունեցան տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Բոստանջյանը, Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Գ.Հայրապետյանը, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը:

Ելույթ ունեցողները նշեցին, որ Գ.Է. Սահակյանը արգասաբեր գործունեություն է ծավալել, բարեխիղճ աշխատող է, վայելում է կոլեկտիվի և ուսանողների սերն ու հարգանքը: Մատնանշելով Գ.Է. Սահակյանի գիտական և մանկավարժական գործունեությունը՝ ելույթ ունեցողները առաջարկեցին թույլատրել քվեարկվել ֆակուլտետի գիտական խորհրդում և կոչ արեցին կողմ քվեարկել:

3. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ Գնել Սահակյանն արժանի է դոցենտի կոչմանը: Հավելեց որ, ըստ կարգի ֆակուլտետի գիտխորհուրդը քվեարկությամբ երաշխավորում է գիտական կոչում հայցելու համար, իսկ ԵՊՀ գիտխորհուրդը փակ քվեարկությամբ հաստատում է այն: Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը ամփոփելով քննարկումը առաջարկեց՝ Գ.Է. Սահակյանի դիմումը՝ դոցենտի գիտական կոչում հայցելու վերաբերյալ, դնել բաց քվեարկության:

4. Խորհրդի նախագահ դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը ամփոփեց քվեարկության արդյունքները: Խորհրդի նիստին ներկա են եղել 32 անդամներից 26-ը, ովքեր բոլորն էլ մասնակցել են քվեարկությանը: Քվեարկության արդյունքները հետևյալն են՝ տ.գ.թ., ասիստենտ Գ.Է. Սահակյանին դոցենտի կոչում շնորհելու օգտին՝ կողմ է քվեարկել գիտխորհրդի 26 անդամ, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հիմք ընդունելով ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտխորհրդի բաց քվեարկության արդյունքները՝ երաշխավորել տ.գ.թ., ասիստենտ Գնել Էդուարդի Սահակյանին դոցենտի գիտական կոչում հայցելու համար:

Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության թեկնածու Գնել Էդուարդի Սահակյանի դոցենտի գիտական կոչում հայցելու վերաբերյալ որոշումն ընդունվեց՝ միաձայն քվեարկությամբ (26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

2. Մագիստրոսական կրթական ծրագրերի փոփոխությունների հաստատում

2.1 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի առկա ուսուցման «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական կրթական ծրագրի փոփոխության հաստատման մասին հարցը:

2.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական ծրագիրը գործում է Սան Խոսեի պետական համալսարանի (ԱՄՆ) հետ համագործակցությամբ՝ ընդգծելով «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական կրթական ծրագրի ուրույն դերակատարումը ֆակուլտետի հեղինակության բարձրացման և միջազգայնացման գործընթացներում: Մատնանշեց, որ արդի պայմաններում թե աշխատաշուկայում, թե Սան Խոսեի պետական համալսարանում տեղի են ունենում որոշակի վերափոխումներ, ուստի գործող կրթական ծրագրում (2 տարի, 120 ECTS) անհրաժեշտ փոփոխություններ են կատարվել և մշակվել է ծրագրի փոփոխված տարբերակը (1,5 տարի, 90 ECTS): Հարցը զեկուցելու համար ձայնը փոխանցեց «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական կրթական ծրագրի ղեկավար տ.գ.դ, պրոֆեսոր Ռ.Գևորգյանին:

2. Պրոֆեսոր, տ.գ.դ Ռ.Գևորգյանը նշեց, որ ծրագրի ժամկետի կրճատումը՝ 2-ից 1,5 տարի (120 կրեդիտից՝ 90), կատարվել է գրավչությունը բարձրացնելու, ինչպես նաև առավել նեղ մասնագիտական հմտություններ փոխանցելու նպատակով: Ընդգծեց, որ ծրագրային փոփոխությունները պայմանավորված են Սան Խոսեի պետական համալսարանի ուսումնական պլանների փոփոխությամբ: Այսօր տվյալները պահվում են տարբեր ֆորմատով, տարբեր տեղերում՝ SQL Server-ներում, Cloud-ում, ժամանակակից մոդելների կիրառությունը թույլ է տալիս դինամիկ՝ ոչ մեծ, հմտությունների հաշվին կատարել վերլուծություն՝ կիրառելով ոչ միայն լեզվական, այլև վիդեո և աուդիո տվյալներ:

3. Հարցեր հնչեցրեցին տ.գ.դ, պրոֆեսորներ Թ.Թորոսյանը և Գ.Վարդանյանը, տ.գ.թ., դոցենտ Գ.Ասլանյանը, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը:

Հարցադրումներն առնչվում էին ՏԳԲ կրթական ծրագրի փոփոխված ուսումնական պլանում ներառված որոշ դասընթացների ձևակերպումներին, ուղղվածությանը և մեկ դասընթաց օտար լեզվով պարտադիր դասավանդելուն:

4. Պրոֆեսոր, տ.գ.դ. Ռ.Գևորգյանը պատասխանելով հարցադրումներին նշեց, որ ինչպես ՏԳԲ կրթական գործող ծրագրում, այնպես էլ փոփոխված տարբերակում երկու համալսարանների համագործակցության սկզբունքի համաձայն ուսումնական պլանները սինխրոնիզացված են, ինչը թույլ է տալիս ծրագրի լավագույն ուսանողներին ուսումնառության 2-րդ տարում ուսումը շարունակել ԱՄՆ Սան Խոսեի պետական համալսարանում:

5. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը ամփոփելով քննարկման արդյունքները առաջարկեց՝ քվեարկությամբ հաստատել ՏԳԲ մագիստրոսական կրթական ծրագրի 1,5 տարի տևողությամբ (90 ECTS) ուսումնական պլանը:

2.1 ՈՐՈՇԵՑԻՆ.

Հիմք ընդունելով ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի 31.03.25թ. կայացած թիվ 10 նիստի որոշումը և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել առկա ուսուցման «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական կրթական ծրագրի ուսումնական պլանի փոփոխված տարբերակը (1,5 տարի, 90 ECTS):

Առկա ուսուցման «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական կրթական ծրագրի ուսումնական պլանի փոփոխված տարբերակի հաստատման որոշումն ընդունվեց՝ միաձայն քվեարկությամբ (26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

2.2 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Ֆինանսահաշվային ամբիոնի «Ֆինանսներ» մագիստրոսական կրթական ծրագրի հեռակա ուսուցման 1,5 տարի տևողությամբ հաստատման մասին հարցը:

2.2 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ մոտ մեկ տարի առաջ գիտխորհրդի նիստում, Ֆինանսահաշվային ամբիոնի կայացրած որոշումը հիմք ընդունելով, քննարկվել և հաստատվել է առկա ուսուցման «Ֆինանսներ» մագիստրոսական կրթական ծրագիրը (1 տարի, 60 ECTS): Հավելեց, որ այսօրվա նիստում ամբիոնի միջնորդությամբ քննարկվում է նույն ծրագրի հեռակա ուսուցման 1,5 տարի տևողությամբ հաստատման հարցը: Հարցը զեկուցելու համար ձայնը փոխանցեց Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, տ.գ.թ. Գ.Սահակյանին:

2. Ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, տ.գ.թ. Գ.Սահակյանը տեղեկացրեց, որ առկա ուսուցման «Ֆինանսներ» մագիստրոսական կրթական ծրագրով գործունեության թույտվությունը և լիցենզիան ստացել են 2024թ. հոկտեմբերին, ՀՀ ԿԳՄՄՆ

նախարարի հրամանով: Հավելեց, որ ամբիոնը, ծրագրի գրավչությունը հաշվի առնելով, նպատակահարմար է գտնում նույն ծրագրի (նույնաբովանդակ ուսումնական պլանով) հեռակա ուսուցման 1,5 տարի տևողությամբ թույլտվություն ստանալը, և դրա համար անհրաժեշտ է ֆակուլտետի գիտխորհրդի որոշումը:

Հարցեր չհնչեցին: Ելույթ ունեցողներ չեղան:

3. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը ամփոփելով քննարկման արդյունքները առաջարկեց՝ քվեարկությամբ հաստատել հեռակա ուսուցման «Ֆինանսներ» մագիստրոսական կրթական ծրագիրը՝ 1,5 տարի տևողությամբ (60 ECTS):

2.2 ՈՐՈՇԵՑԻՆ.

Հիմք ընդունելով ԵՊՀ Ֆինանսահաշվային ամբիոնի 27.02.25թ. կայացած թիվ 8 նիստի որոշումը և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել հեռակա ուսուցման «Ֆինանսներ» մագիստրոսական կրթական ծրագիրը (1,5 տարի, 60 ECTS):

Հեռակա ուսուցման «Ֆինանսներ» մագիստրոսական կրթական ծրագրի հաստատման որոշումն ընդունվեց՝ միաձայն քվեարկությամբ (26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

3. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում «Կանաչ տնտեսություն և կառավարում» մագիստրոսական կրթական նոր ծրագրի ստեղծման հարցը:

3. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ ողջունելի է այն փաստը, որ Կառավարման և գործարարության ամբիոնը «Կանաչ տնտեսություն և կառավարում» մագիստրոսական կրթական նոր ծրագրի ստեղծման գործընթաց է սկսել: Հարցը զեկուցելու համար ձայնը փոխանցեց Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանին:

2. ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը նշեց, որ ամբիոնը պլանավորել է մագիստրոսական ևս մեկ կրթական ծրագիր՝ «Կանաչ տնտեսություն և կառավարում» (1 տարի, 60 ECTS) ունենալ, որն ի դեպ իրականացվում է Erasmus+ շրջանակում Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հետ համատեղ: Հավելեց, որ լիցենզավորման արդյունքում ծրագրի շրջանավարտները կստանան կրկնակի դիպլոմ՝ «Կառավարման մագիստրոսի» որակավորմամբ: Ընդգծեց, որ թե հայաստանյան, թե արտասահմանյան գործընկերների հետ ակտիվ աշխատում են 1 տարուց ավելի:

3. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ ԵՊՀ-ում Erasmus+ շրջանակում պետք է հիմնվեն երեք նոր կրթական ծրագրեր, որոնցից մեկն է «Կանաչ տնտեսություն և կառավարում» մագիստրոսական ծրագիրը: Հավելեց, որ այս նիստում քննարկվում է կրթական նոր ծրագրի ստեղծման հարցը, իսկ բովանդակային հարցերը, ուսումնական պլանը կքննարկվեն գիտխորհրդի առաջիկա նիստերից մեկում, ի դեպ նախորդ ուսումնական տարում համանման ձևով հաստատված «Ստարտափերի կառավարում» (1 տարի, 60 ECTS, դասավանդման լեզուն՝ անգլերեն) մագիստրոսական կրթական նոր ծրագրի ուսումնական պլանի հետ միասին:

4. Հարցեր հնչեցրեցին տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Բոստանջյանը:

Հարցադրումներն առնչվում էին նոր կրթական ծրագրի ստեղծման քայլերի հաջորդականությանը, ամբիոնի ընտրությանը, նոր ստեղծվող կրթական ծրագրի բովանդակությանը:

5. Տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը հարցերին պատասխանելով նշեց, որ չնայած այս նիստում քննարկվում է կրթական նոր ծրագրի ստեղծման հարցը, բայց ծրագրի շրջանակում արդեն գործուղվել է Վիլնյուս (Լիտվա) և մեծ ծավալի աշխատանք արդեն իսկ կատարվել է:

6. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը անդրադառնալով բարձրացված հարցերին նշեց, որ ամբիոնի ընտրության հիմքում այն փաստն է, որ ծրագրում կառավարման բլոկը մեծ է, իսկ բովանդակային հարցերն առաջարկեց քննարկել, երբ առաջիկա նիստերից մեկում ամբիոնը կներկայացնի ծրագրի ուսումնական պլանը: Ամփոփելով քննարկման արդյունքները առաջարկեց՝ քվեարկությամբ հաստատել «Կանաչ տնտեսություն և կառավարում» մագիստրոսական կրթական նոր ծրագրի ստեղծման հարցը:

3. ՈՐՈՇԵՑԻՆ.

Հիմք ընդունելով ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի 17.03.2025թ. կայացած թիվ 6 նիստի որոշումը և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել «Կանաչ տնտեսություն և կառավարում» (1 տարի, 60 ECTS) մագիստրոսական կրթական նոր ծրագրի ստեղծման հարցը:

«Կանաչ տնտեսություն և կառավարում» (1 տարի, 60 ECTS) մագիստրոսական կրթական նոր ծրագրի ստեղծման որոշումն ընդունվեց՝ միաձայն քվեարկությամբ (26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

4. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մագիստրոսական թեզերի ծավալների հաստատման մասին հարցը:

4. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ ԵՊՀ մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգում տեղի են ունեցել փոփոխություններ, որոնք կիրառվում են 2023-24 ուսումնական տարվանից սկսած: Կարգում առանցքային փոփոխություն է e-learning էլեկտրոնային հարթակի ներդնումը մագիստրոսական թեզին առնչվող բոլոր փուլերում: Սույն կարգի համաձայն մագիստրատուրայի ավարտական աշխատանքի շարադրանքի նվազագույն և առավելագույն ծավալները սահմանում է ֆակուլտետի գիտական խորհուրդը՝ ելնելով տվյալ մասնագիտության առանձնահատկություններից: Հավելեց, որ ամբիոնի վարիչների հետ նախնական քննարկման արդյունքում ձևավորվել է առաջարկ, որը ներկայացնում է գիտխորհրդի անդամների քննարկմանը: Մագիստրոսական թեզի ծավալներն ըստ կրթական ծրագրերի տևողության. **1 տարի տևողությամբ (60 ECTS) ծրագրի դեպքում՝ 40 - 55 էջ, 1,5 տարի տևողությամբ (90 ECTS) ծրագրի դեպքում՝ 45 - 60 էջ, 2 տարի տևողությամբ (120 ECTS) ծրագրի դեպքում՝ 50 - 65 էջ:**

2. Ելույթ ունեցան տ.գ.դ., պրոֆեսորներ Վ.Բոստանջյանը, Ռ.Գևորգյանը Թ.Թորոսյանը, տ.գ.թ., դոցենտ Գ.Ասլանյանը:

Ելույթներում բարձրացվեցին հարցեր, որոնք առնչվում էին մագիստրատուրայի ավարտական աշխատանքի նվազագույն ծավալին՝ անկախ ծրագրի տևողությունից, բովանդակությանը՝ մասնավորապես, կառուցվածքի հնարավոր վերանայումներին, ծրագրի տևողությունից կախված մագիստրոսական թեզի կրեդիտատարությունների և ծավալների տարբերությանը:

3. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, ամփոփելով ծավալուն քննարկումը, առաջարկեց քվեարկությամբ հաստատել մագիստրոսական թեզի նվազագույնը՝ 40 էջ և առավելագույնը՝ 60 էջ ծավալները:

4. ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքներն ու առաջարկները, ելնելով տվյալ մասնագիտության առանձնահատկություններից՝ հաստատել մագիստրոսական թեզի նվազագույնը՝ 40 էջ և առավելագույնը՝ 60 էջ ծավալները:

Մագիստրոսական թեզի ծավալների հաստատման մասին որոշումն ընդունվեց՝ միաձայն քվեարկությամբ (26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

5. Ընթացիկ հարցեր

5.1 ԼՍԵՑԻՆ. Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ալվարդ Ալբերտի Խառատյանի՝ թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու թույլտվություն ստանալու մասին հարցը:

5.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ Ալվարդ Խառատյանի գիտական գործունեությունը բավարարում է ատենախոսություն ղեկավարելու թույլտվության ՀՀ ԲԿԳԿ-ի պահանջներին:

2. Ելույթ ունեցան տ.գ.դ., պրոֆեսորներ Վ.Բոստանջյանը, Թ.Թորոսյանը, նշելով, որ ֆակուլտետում պետք է խթանվեն նաև դոկտորի գիտական աստիճան և պրոֆեսորի գիտական կոչում ստանալու գործընթացները:

3. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանն իր զոհունակությունը հայտնեց գործընկերային այն մթնոլորտի համար, որը ձևավորվել է ֆակուլտետում: Ամփոփելով քննարկումը՝ առաջարկեց քվեարկությամբ հաստատել Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ալվարդ Ալբերտի Խառատյանի թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու թույլտվություն ստանալու մասին հարցը:

5.1 ՈՐՈՇԵՑԻՆ.

Հիմք ընդունելով ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի 24.03.25թ. կայացած թիվ 9 նիստի որոշումը և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ երաշխավորել տ.գ.թ., դոցենտ Ալվարդ Ալբերտի Խառատյանին թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու թույլտվություն ստանալու համար:

Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ալվարդ Ալբերտի Խառատյանի թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու թույլտվություն ստանալու որոշումն ընդունվեց՝ միաձայն քվեարկությամբ (26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ